Հաստատում եմ՝

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց

Տնօրեն՝ _____ Տ. Հովսեփյան

<< 16 >> ___10___ 2023թ.

Դասընկերի պլանը բխում է դասընկերի դպրոցի կանոնադրության ու պաշտոնական նկարագրով սահմանված գործառույթներից և դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության պլանից:
Մանուկների ՀԿԿ գծով փոխտնօրեն՝ Զ. Դանակոբյան

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի Վանաձոր

մարզ համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

VII բ դասարան

Սիրունյան Լուսինե Շիրազի

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1. Վերստուգել կամ կազմել աշակերտների անվանացանկը

2.Վերստուգել կամ կազմել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին

4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանքներ

1. Հետևել էլեկտրոնային մատյանում սովորողների առաջադիմությանը

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում

Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկական ժամեր

2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2. Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը

3. Վերահսկել դասարանի սովորողների մասնակցությունը խմբակներում և նախագծային աշխատանքներում

4. Դուրս բերել սովորողների բացակայությունները և գնահատականները:

5.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կրիառել դաստիարակական աշխատանքում

6. Դուրս բերել նույն առարկայից 3 և ավելի անբավարար գնահատական ստացած սովորողների անունները

7.Իրականացնել դիտարկումներ ուղղված սովորողների մեջ ԿԱՊԿ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՈՒՊ –ների մշակմանը

8. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում, համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի միջոցով.

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) –Դասարանում մեծ թիվ են կազմում ջանասիրաբար աշխատող աշակերտները, որոնք ձգտում են գերազանցության: Թույլ առաջադիմությամբ աշակերտների քանակը քիչ է:
Դասարանն ունի ուսման առաջադիմության բարձր ցուցանիշ: Աշակերտները պարտաճանաչ են, մեծ պատասխանատվությամբ են վերաբերում բոլոր առարկաներին, Համերաշխ են, հարգում և հետևում են դպրոցի ներքին կարգապահական կանոններին, Դպրոց են հաճախում անհրաժեշտ ուսումնական պարագաներով, աշխատանքներ եմ տանում անհարկի բացակայությունները բացառելու ուղղությամբ:

2.Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն –
Նախատեսվում են տարաբնույթ զրույցներ ինչպես դասղեկի ժամերին, այնպես էլ դասապրոցեսի ընթացքում: Ռազմահայրենասիրական դաստիարակության հարցում կարևոր է նվիրյալ հայորդիների կյանքի և գործի ուսումնասիրումը, դավանած գաղափարներին հետևելը: Նրանց օրինակով և ոգով պետք է ոգևորել ու խրախուսել աշակերտներին:
3. Ֆիզիկական դաստիարակություն –Պարբերաբար անցկացնել քննարկումներ անձնական հիգիենային և առողջ ապրելակերպին նվիրված: Պահանջել և լինել հետևողական, որ աշակերտները լինեն պահանջկոտ սեփական անձի նկատմամբ՝ ֆիզիկական պատրաստվածության տեսանկյունից:
4.Աշխատանքային դաստիարակություն –
Արթնացնել սեր, հարգանք, ճիշտ վերաբերմունք շրջակա միջավայրի, ազգային ժառանգության նկատմամբ: Սերմանել հոգատար վերաբերմունք դպրոցամերձ տարածքի, դասարանի գույքի հանդեպ, բարձրացնել աշակերտների բարոյակամային որակները:
5.Հոգևոր դաստիարակություն –
Յուրաքանչյուր աշակերտի համար կարևոր է հայեցի դաստիարակությունը:
Աշակերտի մոտ պետք է ձևավորել այն գիտակցումը, որ ինքնէ հայ մշակույթի և լեզվի կրողն ու փոխանցողը, քրիստոնեական արժեհամակարգի անխախտ հետևորդը: Նախատեսվում է բացատրական զրույցների և էքսկուրսիաների միջոցով ձևավորել կայուն և դրական աշխարհայացք հոգևոր ոլորտի նկատմամբ: Հայը պետք է մշտապես

զգոն լինի, լինի ամուր հոգով ու հավատով, քանի որ անգամ այժմ մենք գտնվում ենք թշնամու մշտական հարձակումների ներքո:

6. Գեղագիտական դաստիարակություն –

Գեղագիտական դաստիարակության, նպատակով նախատեսվում է կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ, թատրոններ, համերգասրահներ և պատկերասրահներ, ԿԳՄՍ նախարարության կողմից աշակերտերին հատկացված աբոնեմենտային տոմսերի միջոցով: Գեղագիտական ճաշակի ձևավորման հարցում կարևոր է նաև ընթերցասիրության խթանումը և խրախուսումը: Նաև դասղեկի ժամերին նախատեսվում են տեսաներկայացումների ցուցադրություններ՝ համաշխարհային մշակույթի և հայ մշակույթի երևելի անձանց կյանքի և գործունեության մասին:

7. Բնապահպանական դաստիարակություն –

Կազմակերպվող էքսկուրսիաների ընթացքում աշակերտների մոտ ձևավորել սրտացավ վերաբերմունք բնության նկատմամբ: Պատեհ բոլոր առիթների դեպքում աշակերտներին ծանոթացնել առկա բնապահպանական խնդիրներին:

8. Դպրոց – ընտանիք կապը – Մշտապես պահել աշակերտ- ծնող-ուսուցիչ- դպրոց կապը: Օգնության անհրաժեշտության դեպքում հոգեբանի հետ ծնողի և աշակերտի հետ կազմակերպել խորհրդակցություն և տալ հոգեբանական աջակցություն: Ծնողներին ներգրավել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	
Օգոստոս-Սեպտեմբեր	1.Աշխատանքային պլանավորում: 2Դասարանի ակտիվի ընտրություն: 3.Աշակերտներին ներկայացնել դպրոցի ներքին կարգապահական կանոնները: 4.Ծնողական ժողովի անցկացում և ծնողական խորհրդի ձևավորում: 5.Դասարանական անկյան ձևավորում: 6. Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին: 7.Դասարանի սոցիալապես անապահով, ծնողազուրկ երեխաների հաշվառում և ցուցակի կազմում: 8.ԱՈՒՊ-ի կազմում:	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	
Հոկտեմբեր	1.Դասարանում հերթապահության կազմակերպում: 2Դասալսումների կատարում: 3.Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում: 4.Հերթապահության կազմակերպում: 5.Անհատական աշխատանք դժվարդաստիարակվող և առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող աշակերտների հետ:	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	
Նոյեմբեր	1.Դասագրքերի վիճակի ստուգում: 2Ծնողական ժողովի անցկացում: 3.Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներում:	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	
Դեկտեմբեր	1.Դասարանական անկյան թարմացում: 2Դասալսումների կատարում:	Դասղեկ Աշակերտներ	
Հունվար	1.Դասագրքերի վիճակի ստուգում: 2.Ծնողական ժողովի անցկացում: 3.Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներում:	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	

Փետրվար	1.Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին: 2.Աշխատանք անհարգելի բացակայող և հաճախ ուշացող աշակերտների Ծնողների հետ:	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	
Մարտ	1.Աշխատանքային տետրերի ստուգում: 2.Հետևել աշակերտների հիգիենիկ վիճակին:	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	
Ապրիլ	1.Դպրոցական դասագրքերի, աշակերտական պիտույքների ստուգում: 2.Ծնողական ժողով: 3.Անհատական աշխատանք դժվարդաստիարակվող և առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող աշակերտների հետ: 4.Մերձդպրոցական տարածքի մաքրում,ծառատունկ	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	
Մայիս	1.Դասասենյակի հիմնավոր մաքրում: 2.Ծնողական ժողով: 3.Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում	Դասղեկ Աշակերտներ Ծնողներ	

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման ժամանակը	Թեմա	Անցկացման կարգը	Կատարող
04.09-08.09	Դասարանական ակտիվի ընտրություն.	Փակ գաղտնի քվեարկություն	Դասղեկ, աշակերտներ
11.09-15.09	Դպրոցի ներքին կարգապահական նորմերը:	Զրույց	դասղեկ
19.09-22.09	Մտորումներ անկախության, ժողովրդավարության և հայրենասիրության մասին:	Զրույց	Դասղեկ, աշակերտներ
25.09-29.09	Իմ դերը հայրենիքի հզորացման գործում	Զրույց, քննարկում	Դասղեկ, աշակերտներ
02.10-06.10	«Աշակերտների իրավունքները և պարտ ականությունները դպրոցում» նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտակ անությունները:	Զրույց, քննարկում	Դասղեկ, աշակերտներ, հասարակ. ուսուցչուհի
09.10-13.10	«Բնական պաշարներ» թեմայով քննարկո ւմը կձևավորի գիտելիքներ արդյունաբեր ության տարբեր ոլորտների վերաբերյալ:	Ներկայացնում են սովորողները	
16.10-20.10	«Էկոլոգիական հիմնախնդիրներ» : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապե տության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	Ներկայացնում են սովորողները	Դասղեկ, աշակերտներ, լաբորանտ
30.10-03.11	«Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա մ իջավայրը» ասոցացնել հին և նոր դասը տալ խնդրին նոր լուծումներ:	Այց՝ տնկարան, բնապահպանակ ան թեմաներով տեսանյութերի դիտում	Դասղեկ, աշակերտներ
06.11-10.11	Ընկերություն և ընկերասիրություն	Ներկայացնում են աշակերտները	Աշակերտներ
13.11-17.11	Մեդիագրագիտություն	Տեսանյութի դիտում	Դասղեկ, աշակերտներ, օպերատոր
20.11-24.11	Ճանապարհային երթևեկության կանոնները	Ուսուցողական խաղ	Դասղեկ, աշակերտներ

27.11-01.12	Ցանկանում եմ դառնալ…	Ներկայացնում են աշակերտները	Աշակերտներ
04.12-08.12	Բնական աղետներից պաշտպանություն	Զրույց	Դասղեկ, աշակերտներ
11.12-15.12	Առողջ ապրելակերպը, որպես կեսակերպ:	Զրույց	Դասղեկ, աշակերտներ
18.12-22.12	«Ազգային և միջազգային տոներ» նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձ նահատկությունները:	Քննարկում	Դասղեկ, աշակերտներ
08.01-12.01	«Եկեղեցին և ազգը» քննարկման միջոցով աշակերտների մո տ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իր ականության և հայ ժողովրդի կյանքում:	Զրույց	Դասղեկ, աշակերտներ
15.01-19.01	Կոլեկտիվ պաշտպանության միջոցներ: Աշակերտների գործողությունները «Օդային տագնապի ժամանակ»:	Դասախոսությու ն	Դասղեկ, աշակերտներ
22.01-23.01	Աշակերտների գործողությունները երկրաշարժի ժամանակ:	Զրույց	Զինղեկ
29.01-02.02	Զրհեղեղի սպառնալիքի դեպքում իշխանությունների և բնակչության գործողությունները:	Խմբային գործնական աշխատանք	Աշակերտներ
05.02-09.02	Արյան շրջանառության սուր խանգարումներ: Առաջին բուժօգնություն:	Խմբային գործնական աշխատանք	Աշակերտներ
12.02-16.02	Շոկ: Փակ վնասվածքների: Առաջին բուժօգնություն:	Խմբային գործնական աշխատանք	Աշակերտներ
19.02-23.02	Առաջին բուժօգնություն հենաշարժողական վնասվաշքների ժամանակ: Այրվածքներ:	Խմբային գործնական աշխատանք	Աշակերտներ
26.02-01.03	Պատերազմական իրավիճակներում կիրառվող թունավոր նյութեր: Առաջին բուժօգնություն:	Զրույց	Զինղեկ
04.03-07.03	Կենցաղային թունավորում: Կենդանիների և միջատների կծած, խայթած վերքեր:	Զրույց	Բուժքույր
11.03-15.03	Այց մոտակա այգի:	Զբոսանք	Դասղեկ, աշակերտներ, ուսուցչի օգնական

18.03-22.03	Ճանաչենք ինքներս մեզ:	Հոգեբանական թեստի անցկացում	Դասղեկ, աշակերտներ, հոգեբան
01.04-05.04	Այց Ստեփան Զորյանի տուն-թանգարան:	Այց	Դասղեկ, աշակերտներ, ուսուցչի օգնական, գրակ. ուսուցչուհի
08.04-12.04	Շաբաթօրյակի անցկացում:	Դասասենյակի, դպրոցամեջ տարածքի մաքրում	Դասղեկ, աշակերտներ
15.04-19.04	Բացահայտում ենք մեր վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:	Հոգեբանական թեստի անցկացում	Դասղեկ, աշակերտներ, հոգեբան
22.04-26.04	Ժամանակակից հասարակության ընդունվաշ վարքականոնները:	Զրույց, քննարկում	Դասղեկ, աշակերտներ
29.04-03.05	Կարգ ու կանոն մեր շրջապատում	Դասասենյակի մաքրում	Դասղեկ, աշակերտներ
06.05-10.05	Միասնությունը ուժ է:	Զրույց	
13.05-17.05	Ընտանիքի միջազգային օր: Առողջ ընտանիքը, որպես առողջ հասարակության ձևավոման գրավական:	Քննարկում	Դասղեկ, աշակերտներ
20.05-24.05	Ճանաչողական էքսկուրսիա		

Ծնողական ժողովների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Օգոստոս-սեպտեմբեր	Կազմակերպչական հարցեր Դասագրքերի բաշխում Փակ գաղտնի քվեարկության միջոցով ծնողական խորհրդի ընտրություն	Դասղեկ, փոխտնօրեն	
Նոյեմբեր	Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում Կարգապահական խնդիրների դիտարկում, երկամսյակի արդյունքների քննարկում, առաջացած խնդիրների վերհանում, լուծման ուղիների նախանշում:	դասղեկ	
Հունվար	Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում Կարգապահական, խնդիրների դիտարկում, կիսամյակի արդյունքների ամփոփում. Ուսման որակի բարձրացմանը նպաստող քայլերի մշակում:	դասղեկ, դասավանդող ուսուցիչներ	
Ապրիլ	Երկամյակի արդյունքների ներկայացում Օրվա ռեժիմի պահպանման, անհարկի բացակայությունների բացառման, առողջ սննդակարգի պահպանման կարևորության մասին զրույց	դասղեկ	
Հունիս	Ուսումնական տարվա ամփոփում, արդյունքների վերլուծություն, ձեռբերումների և բացթողումների տարանջատում, հետագա անելիքների պլանավորում	դասղեկ	